ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 28 - Ա
31 հուլիսի 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ներքին աուդիտի 2013թ տարեկան ծրագրին համապատասխան "Մարտունու բժշկական կենտրոն" փակ բաժնետիրական ընկերությունում ներքին աուդիտ անցկացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Ղուլոյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի վարիչ, աշխատանքային խմբի ղեկավար

Հովհաննիսյան Գ.- մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ

Հայկազյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ

Անհրաժեշտության դեպքում աշխատանքային խմբի մեջ ներգրավել համապատասխան մասնագետներ և փորձագետներ:

2. Աշխատանքային խմբին՝ իրականացված աուդիտի արդյունքները սահմանված ժամկետում ներկայացնել ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

Ա.ՀԱԿՈԲՅԱՆ